



ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ-ԶԵՎԱԶԱՓ

ՄԱՍ 1

Լրացվել է՝ հիմք ընդունելով Ծրագրի նպատակը, խնդիրները՝ օգտվելով համապատասխան լիազոր մարմինների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներից, ՀՀ Լոռու մարզպետարանի և համայնքի պաշտոնական կայքերից, Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) տվյալներից, Տարածքային զարգացման հիմնադրամի կայքից, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից փոքր ՀԷԿ-երի և հանքարդյունաբերական ընկերությունների ոլորտներում կատարված ուսումնասիրությունների տվյալների բազայից, պաշտոնական այլ փաստաթղթերից և ստորագրված պայմանագրերից:

1. Ընդհանուր տվյալներ Ախթալա համայնքի մասին

Համայնքում ընդգրկված բնակավայրերը, այդ թվում ազդակիր բնակավայրերն են՝ Ախթալա և Շամլուղ քաղաքները, Մեծ Այրում, Փոքր Այրում, Ճոճկան, Նեղոց գյուղերը:

Համայնքի ղեկավար՝ Թամազյան Արկաղի Սամվելի, հեռ. 055002595

Համայնքի ավագանին՝ 11 անձ

1. Ամիրջանյան Արեն Արտաշեսի
2. Անդրեասյան Գևորգ Ժորայի
3. Աքելյան Վախթանգ Վազգենի
4. Բեժանյան Սուրեն Լենդրուշի
5. Գալստյան Գյորգի Սամվելի
6. Դալլաքյան Արեն Ալբերտի
7. Թամազյան Ռուդիկ Ռուբիկ
8. Չերչինյան Սենիկ Սուրենի
9. Վարդանյան Լյովա Ժորժիկի

10.Փարսադանյան Սամվել Ռուբենի

11 Աղաբաբյան Արթուր Արամի՝ լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել է ավագանու

22.12.2017թ. թիվ 2 արձանագրությամբ

Համայնքի սոցիալական, տարիքային, գենդերային պրոֆիլ

Համայնքի բնակչության ընդհանուր թիվը՝ 7719 մարդ, որից կին՝ 3936, տղամարդ՝ 3783, նպաստառու ընտանիքների թիվը՝ 198, կենսաթոշակառուների թիվը՝ 1123, տնային տնտեսությունների թիվը՝ 2189 ըստ համայնքի զարգացման վերջին՝ 2018թ-ին հաստատված Ծրագրի:

Ըստ համայնքապետարանի պաշտանական <http://www.akhtala.am/Pages/Registry/Demographic/DemographicMain.aspx> կայքի 2021 թվականի սեպտեմբեր անսվա սկզբի տվյալների համայնքի բնակչության թիվը կազմում է 7119 մարդ, , որից 3606 հոգին արական սեռ, 3513 հոգին՝ իգական սեռ: Բնակչության տարիքային կազմը՝ 0-6 տարեկան՝ 333, 7-17 տարեկան՝ 877, 18-62 տարեկան՝ 4609 , 63 տարեկան և ավելի՝ 1300 հոգի: Նույն օրվա դրությամբ տնային տնտեսությունների թիվը կազմում է 1967, որի 25,5%-ը բաղկացած է 1 շնչից: Բնակչության հիմնական զբաղմունքը՝ վարձու աշխատանք «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում, «Թեղուտ» ՓԲԸ-ում, երկրագործություն, անասնապահություն, մեղվաբուծություն:

Գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը՝ 2930,2 հա Աղբավայրեր չունեն, սակայն նախատեսված է Ախթալա և Ալավերդի քաղաքի հետ միասին հիմնել մեկ աղբավայր:

Նախադպրոցական հաստատությունների թիվը՝ 4 հատ:

Հանրակրթական դպրոցների թիվը՝ 6 հատ:

Համայնքի տարածքով հոսում են Դեբեդ, Ախթալա, Նազիկ, Նահատակ գետերը:

Համայնքի վարչական տարածքում գործող հանքարդյունահանող կամ վերամշակող կազմակերպությունների, փոքր ՀԷԿ-երի ցանկը՝

Մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպություն՝

1.«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, հանքավայրի մակերեսը՝ 426,2 հա, արդյունահանում է պղնձի հանքաքար Շամլուղի պղնձի հանքավայրից, արդյունահանում և իրացնում է պղնձի խտանյութ և խտահանքեր: Համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության պարտավորություններ չի ներառել իր ՊՎ-103 ընդերքօգտագործման պայմանագրում:

Ոչ-մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպություններ՝

1. «Թումանյանի ՃՇՇ» ԲԲԸ՝ Դեբեդի ԱԿԽ, Նեղոցի և Շնողի տեղամասեր, համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության պարտավորություններ չի ներառել իր ՊՎ-017 ընդերքօգտագործման պայմանագրում:

ՓՀԷԿ-եր

1. «Սալեներգո» ՍՊԸ, «Այրում»ՓՀԷԿ, Դեբեդ գետ, ոռոգման համակարգ

Համայնքի սոցիալական և բնապահպանական բացահայտված խնդիրներն՝ ըստ համայնքի անձնագրի և սոցիալ-տնտեսական զարգացման վերջին գործող ծրագրի

- Աղքատության ցուցանիշը 28.5%

- **Համայնքի ուժեղ կողմերը**

Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (համայնքի տարածքով անցնող հանրապետական նշանակության ճանապարհը), զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմանների, համայնքին հարակից անտառամերձ գոտու, խմելու ջրի ներհամայնքային ամակարգերի, պատմամշակութային հուշարձանների առկայությունը, քաղաքացիների և տնտեսավարողների իրավունքների պաշտպանության նկատմամբ համայնքի ղեկավարի և ավագանու շահագրգռվածությունը, համայնքի բյուջեի սեփական եկամուտների կայուն աճը, ակտիվ բնակչության խավի և «Համայնքային ակտիվների խմբի» /ՀԱԽ/ առկայությունը:

- **Համայնքի թույլ կողմերը**

Քաղաքացիների իրավական ակտերին անձանոթ լինելը և իրավական գիտակցության ցածր մակարդակը, համայնքի բարդ և աղետավտանգ ռելիեֆը, ջրահեռացման համակարգի վատ վիճակը և մաքրման կայանի բացակայությունը, հողերի որակի բարելավմանն ուղղված անբավարար միջոցներ, ինչպես նաև թունավոր նյութերի մաքրման համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը, զբաղվածության ցածր մակարդակը և միգրանտների դիանմիկայի աճը, մրգերում և հատապտուղներում ծանր մետաղների առկայությունը, զբոսաշրջության ենթակառուցվածքների բացակայությունը կամ թույլ զարգացվածությունը, համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը, ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը, մի շարք թաղամասեր գազամատակարարման ծածկույթի մեջ չընդգրկված լինելը, աշխատատեղերի սղությունը և գործազրկության բարձր մակարդակը, համայնքում սոցիալական խոցելի խմբերի առկայությունը:

2020թ-ի դրությամբ համայնքի բնապահպանական բնութագիրն՝ ըստ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքի

(<http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Annual-2020.pdf>) և պաշտոնական ու ոչ պաշտոնական այլ աղբյուրների

Մթնոլորտային օդի վիճակը Ախթալա համայնքում

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին» 2020թ. տարեկան ամփոփագրի՝ ՊՈԱԿ-ը մթնոլորտային օդի որակի ակտիվ նմուշառման դիտակետեր Ախթալա քաղաքում և համայնքի բնակավայրերում չունի, ունի միայն 4 հատ պասսիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտային օդի որակի նմուշառման կետերը բացակայում են նույնիսկ Շամլուղում և Մեծ Այրում գյուղում: ՊՈԱԿ-ի տարեկան ամփոփագրերում Ախթալա քաղաքի վերաբերյալ տվյալները բացակայում են: Սակայն, ըստ Ալավերդի քաղաքի և դրա հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի օքսիդների 2020թ. միջին տարեկան կոնցենտրացիանի բաշխվածության քարտեզների, Ախթալա համայնքում մթնոլորտային օդում այդ նյութերի պարունակությունները չեն գերազանցել թույլատրելի սահմանային կոնցենտրացիաները:

Մակերևութային ջրերի աղտոտվածության մասին

2020 թվականի մոնիտորինգի տվյալների համաձայն՝ հանքարդյունաբերական գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում են Ախթալա գետը գետաբերանի հատվածում, Դեբեդ գետը Այրումից վերև և ՀՀ սահմանի մոտ:


Դեբեդ գետի գետաբերանի՝ Այրումից 0,5 կմ վերև, ջրի որակի ընդհանրական դասը 4-րդ է, ըստ մանգանի և վանադիումի՝ 3-րդ, ըստ մոլիբդենի, երկաթի և կախված նյութերի՝ 4-րդ: Սահմանի մոտ նույնպես Դեբեդի ընդհանրական որակի դասը 4-րդ է:

Ախթալա գետի գետաբերանի մոտ ջրի որակի ընդհանրական դասը 5-րդ կարգի է, ըստ թթվածնի քիմիական պահանջի, ամոնիում իոնի, բերիլիումի, կալիումի ալյումինի, ընդհանուր լուծված աղերի՝ 3-րդ, ըստ մոլիբդենի, կալցիումի՝ 4-րդ, ըստ ցինկի, պղինձի, կադմիումի, մանգանի, կոբալտի, երկաթի, սուլֆատ իոնի, կախյալ նյութերի՝ 5-րդ:


Շնող գետի ջրի որակը Թեղուտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով: Գետաբերանի հատվածում գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Հողերի վիճակը

2020 թվականի 4-րդ եռամսյակում ՊՈԱԿ-ի կողմից հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են իրականացվել Լոռու մարզի գետերի հարակից հանքարդյունաբերական տարածքներում: Ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ Լոռու մարզի հողերում ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N01-Ն հրամանով սահմանված ՍԹԿ-ները գերազանցում են հետևյալ մետաղների պարունակությունները. ցինկ՝ 3.7-12.7 անգամ, արսեն՝ 5.3-25.5 անգամ, պղինձ՝ 13.2-110.0 անգամ, քրոմ՝ 5.2-25.8 անգամ, նիկել՝ 5.9-17.9 անգամ, որոշ հատվածներում նաև կապար՝ 1.1-8.9 անգամ: Ըստ գետավազանների՝ այդ նյութերի կոնցենտրացիաներն ունեն հետևյալ պատկերը՝ նկ.1 և նկ.2՝



Նկ. 1



Նկ.2

Համայնքի հողերի աղտոտվածությունը հաստատում են նաև տեղական և միջազգային կառույցների մասնագետների կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները: 2018-2019 թվականներին քիմիական անվտանգության հարցերով զբաղվող չեխական «ԱՐՆԻԿԱ» կազմակերպության՝ հայաստանայան ՀԿ-ների հետ համագործակցությամբ իրականացվել են հետազոտություններ, որոնք հիմնավորում են Մեծ Այրումում, Ախթալա համայնքի և Ալավերդի համայնքի մի շարք բնակավայրերում հանքարդյունաբերական աղտոտիչների առկայությունը և դրանց տարածումը հողում, միրգ-բանջարեղենում և մարդու օրգանիզմում: 2015 թվականին Հայաստանի Ամերիկյան համալսարանը Ախթալա քաղաքի երեխաների արյան

փորձաքննությունն իրականացրեց և պարզեց, որ ծանր մետաղները երեխաների արյան մեջ գերազանցում են նորման բազմաթիվ անգամներ <https://www.ecolor.org/files/uploads/pdf/Court/publicenvironmentalcourtahatakfinal.pdf.pdf>:

2017թ. դեկտեմբերի 22-ին Ախթալայի Բարիտ թաղամասի դպրոցի մոտակայքում «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի հարստացուցիչ ֆարրիկայից պոչամբար գնացող խյուսատար գծի վրա տեղի է ունեցել վթար և առաջացել խյուսի արտահոսք: <https://hetq.am/hy/article/84528>, <https://www.azatutyun.am/a/28931125.htm>

Փակված հանքարդյունահանման թափոնների (պոչամբարների) և արտադրական լցակույտերի առկայությունը համայնքի տարածքում

Համայնքի տարածքում է գտնվում Նազիկ պոչամբարը (Նազիկ պոչամբարը «Ախթալայի ԼՀԿ ՓԲ ընկերության երեք պոչամբարներից մեկն է, որը գտնվում է կոմբինատից 0.5 կմ հեռավորության վրա՝ Նազիկ գետի հովտում, դրա մի մասը տեղափոխվել է Ալավերդու պղնձաձուլական կոմբինատ և օգտագործվել որպես խարամ: Պոչամբարի մակերեսը մոտ 2 հա է: Պոչամբարի նախագծային հզորությունը կազմում է 0.5 մլն.մ³, լցված է 0.4 մլն.մ³: Պոչամբարը կոնսերվացվել էր 1988թ-ին, սակայն 2000-ականներին վերագործարկվել և կրկին անգամ կոնսերվացվել է 2010թ-ին: Պոչամբարի մակերևույթը ռեկուլտիվացված է և ծածկված է բուսականությամբ: Սակայն, համաձայն դաշտային դիտարկումների տվյալների, պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքները կատարված են ոչ լիարժեք, պոչամբարի պատվարը ենթարկված է էրոզիայի, դրանում կուտակված ընդերքօգտագործման թափոնների մեկուսացումը ապահով չէ: Ջրահեռացման համակարգը բացակայում է: Պոչամբարի մակերեսի ոչ բավարար մեկուսացման պատճառով մթնոլորտային տեղումները ներծծվում են, դուրս են գալիս պատվարի հատակային մասից դրենաժային հոսքաջրերի տեսքով և տարածվում են ռելիեֆով և թափվում Ախթալա գետը:

Համայնքի տարածքում են գտնվում նաև Շամլուղի՝ Շամլուղ գյուղից հյուսիսարևելք, հարակից տարածքը, որը պատկանում է «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ին և Ախթալայի՝ Ախթալա քաղաքից մոտ 0.6կմ հյուսիս-հյուսիս-արևելք և մոտ 0.5կմ հյուսիս-արևմուտք՝ տիրագուրկ ընդերքօգտագործման թափոնների լքված արտադրական լցակույտերը:

Շամլուղի տեղամասի ընդերքօգտագործման թափոններն առաջացել են հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության և շահագործման աշխատանքների արդյունքում, իսկ Ախթալայինը՝ Ախթալայի բարիտ-բազմամետաղային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության և շահագործման արդյունքում <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/ynderqi-hashvetvutyunner>

Համայնքի տարածքում է գտնվում նաև «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին պատկանող «Նահատակի » պոչամբարը և «Պահեստի ձորի»/պահուստային պոչամբարը:

Համայնքի էներգետիկ և ընդերքօգտագործման նշանակության հողերի մակերեսը----- հազ. հա

Համայնքի էներգետիկ և ընդերքօգտագործման նշանակության հողերի վարձակալության դիմաց ստացված տեղական բյուջեի մուտքերը՝ 174,0 հազ. դրամ:

Համայնքի բյուջեն

Համայնքի տարեկան բյուջեի մուտքերը 2020 թվականին կազմել են 542288,0 հազ. դրամ, որից սեփական եկամուտներ՝ 140110,1 հազ. դրամ, պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ՝ 169985,4 հազ. դրամ, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 13460,0 հազ. դրամ, հողի հարկ՝ 12190,0 հազ. դրամ: Այլ եկամուտներ՝ 60000,0 հազ. դրամ («Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ): Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, 12815,0 հազ. դրամ:

Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, 217 877,5 դրամ:

Ախթալա համայնքի 2021 թվականի համայնքային բյուջեն՝ 402803,8 հազ. դրամ, սեփական եկամուտներ՝ 150900,0 հազ. դրամ, պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ՝ 198641,2 հազ. դրամ, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 13506,0 հազ. դրամ, հողի հարկ՝ 12190,0 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 66000,0 հազ. դրամ («Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ):

Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից՝ 53261,7 հազ. դրամ:

2020 թվականին համայնքապետարանի կողմից ներկայացված սուբվենցիոն ծրագրերի նախնական ցանկում ընդգրկված են եղել հետևյալ ծրագրերը՝

1. Ախթալայի ճոճկան գյուղի մշակույթի տան գույքի ձեռքբերում ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 19.25 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 11.55 մլն. դրամ, այլ ներդրող՝ 0 դրամ, պետական ներդրում՝ 7.70 մլն. դրամ:
2. Ճոճկան և Մեծ Այրում գյուղերի լուսավորության նոր համակարգերի կառուցում, ընդհանուր բյուջեն՝ 68.69 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 10.04 մլն. դրամ, այլ ներդրող՝ 14.00 մլն. դրամ, պետական ներդրում՝ 44.65 մլն. դրամ:
3. Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում՝ ասֆալտապատման և տուփապատման միջոցով՝ ընդհանուր բյուջեն՝ 125.00 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 56.25 մլն. դրամ, այլ ներդրող՝ 0 դրամ, պետական ներդրում՝ 68.75 մլն. դրամ:
4. Շամլուղ և Ախթալա բնակավայրերի հանդիսությունների սրահների հիմնանորոգում՝ ընդհանուր բյուջեն՝ 21.22 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 12.73 մլն. դրամ, այլ ներդրող՝ 0 դրամ, պետական ներդրում՝ 8.49 մլն. դրամ:

5. Համայնքի «Ճոճկան գյուղի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ ընդհանուր բյուջե՝ 45.73 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 18.29 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 դրամ, պետական ներդրում՝ 27.44 մլն. դրամ:

6. Ճոճկան գյուղի ոռոգման համակարգի կառուցում՝ ընդհանուր բյուջե՝ 20.16 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 7.06 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 դրամ, պետական ներդրում՝ 13.11 մլն. դրամ:

7. Ախթալա համայնքի ԲԲՇ-ների տանիքների վերանորոգում՝ ընդհանուր բյուջե՝ 40.54 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 16.22 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 դրամ, պետական ներդնում՝ 24.32 մլն. դրամ:

8. ԲԲՇ-ի էներգաարդյունավետության բարձրացում ընդհանուր բյուջե՝ 87,13 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 26,9 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 դրամ, պետական ներդնում՝ 60,23 մլն. դրամ:

ՀՀ վարչապետի 19.03.2019թ. թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված՝ սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրեր՝ 15/06/2021 դրությամբ՝

1. Ախթալա և Շամլուղ բնակավայրերի հանդիսությունների սրահների հիմնանորոգում՝ 21,22 մլն.դրամ
2. Ախթալա համայնքի ԲԲՇ-ների տանիքների վերանորոգում՝ 40,54 մլն. դրամ
3. Համայնքի «Ճոճկան գյուղի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ 45,73 մլն. դրամ,
4. Ճոճկան գյուղի մշակույթի տան գույքի ձեռքբերում՝ 19,25 մլն. դրամ,
5. Ախթալա համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում՝ ասֆալտապատման և տուփապատման միջոցով՝ 125,0 մլն. դրամ
6. Ճոճկան գյուղի ոռոգման համակարգի կառուցում՝ 20,16 մլն. դրամ

2019 թվականին Ախթալա համայնքում իրականացված սուբվենցիոն ծրագրերն են՝

1. Համայնքի ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների բարեկարգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 49 500 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 27 225 000 դրամ:

2. Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 22 423 080 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 12 332 700 դրամ:

3. Մեծ և Փոքր Այրում բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 56 160 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 36 504 000 դրամ:

4. Ճոճկան համայնքի ոռոգման գլխավոր ջրատար առվի վերանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 16 650 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 10 822 500 դրամ:

5. Համայնքի թիվ 1 ՆՌԻՀ շենքի տանիքի և 2-րդ հարկի հիմնանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 13 080 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 7 848 000 դրամ:

6. Ճոճկան համայնքի մշակույթի տան շենքի հիմնանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 34 500 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 13 800 000 դրամ:

7. Նեղուց գյուղի, Շամլուղ քաղաքի կենտրոնական հատվածի և Բուղաքար թաղամասի, Ախթալա քաղաքի Առափնյա թաղամասի գազաֆիկացում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 66 024 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 39 614 400 դրամ:

8. Համայնքի լուսավորության համակարգերի արդիականացում, նորի կառուցում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 18 600 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 11 160 000 դրամ:

2020թ. Ախթալա համայնքում իրականացված սուբվենցիոն ծրագրերն են՝

1. Շամլուղ և Ախթալա բնակավայրերի հանդիսությունների սրահների հիմնանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 17 000 220 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 7 328 100 դրամ:

2. ԲԲՇ-ների տանիքների վերանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 22 378 800 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 14 753 300 դրամ:

3. Ճոճկան բնակավայրի ՆՌԻՀ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 39 960 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 25 134 000 դրամ:

4. Ճոճկան բնակավայրի մշակույթի տան գույքի ձեռքբերում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 13 123 400 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 5 249 360 դրամ:

5. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում մասնակի նորոգման, ասֆալտապատման և տուֆապատման միջոցով, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 132 591 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 26 720 510 դրամ:

6. Ճոճկան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 15 300 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 10 524 150 դրամ:

7. ԲԲՇ-ի էներգաարդյունավետության բարձրացում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 87 130 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 60 229 650 դրամ:

8. Ճոճկան և Մեծ Այրում բնակավայրերի լուսավորության նոր համակարգերի կառուցում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 25 200 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 17 400 497 դրամ:

2021թ. հաստատվել են հետևյալ ծրագրերը՝

1. «Ախթալա համայնքի Ախթալա բնակավայրի Աբովյան փողոցի թիվ 22 և 23, Շահումյան փողոցի թիվ 22 ԲԲՇ-ների տանիքների հիմնանորոգում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 37709392,0 դրամ. համայնքի ներդրումը՝ 22625635,0 դրամ, պետական ներդրումը՝ 1508375 դրամ
2. «Ախթալա համայնքի Ճոճկան բնակավայրի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում տուֆով սալարկման միջոցով»- ծրագրի ընդհանուր արժեքը՝ 24249020 դրամ . համայնքի ներդրումը՝ 22625635,0, պետական ներդրումը՝ 15761863 դրամ
3. «Ախթալա համայնքի Ախթալա և Ճոճկան բնակավայրերի ավտոկայանատեղիների կառուցում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 73071998 դրամ. համայնքի ներդրումը՝ 21921599 դրամ, պետական ներդրումը՝ դրամ, այլ ներդնող՝ 14614399 դրամ:

4. «Ախթալա համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում մասնակի նորոգման, ասֆալտապատման միջոցով» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 73453306 դրամ. համայնքի ներդրումը՝ 25708653 դրամ, պետական ներդրումը՝ 33653992,0 դրամ, այլ ներդնող՝ 14690661,0 դրամ:

5. «Ախթալա համայնքի Շամլուղ քաղաքի 1-ին փողոցի 7-րդ, 7-րդ փողոցի 1-ին, Ախթալա քաղաքի Աբովյան 19, Գնունի 1 և Օրջոնիկիձե 1 ԲԲՇ-ների էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 25309914 դրամ. համայնքի ներդրումը՝ 8858469 դրամ, պետական ներդրումը՝ 11389463,0 դրամ. այլ ներդնող՝ 5061982,0 դրամ:

6. «Ախթալա համայնքի Ճոճկան բնակավայրի ռոռգման համակարգի կառուցում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 45274454 դրամ. համայնքի ներդրումը՝ 15846058 դրամ, պետական ներդրումը՝ 29428396,0 դրամ:

7. «Ախթալա համայնքի Շամլուղ բնակավայրի զբոսայգու վերանորոգում»- ծրագրի ընդհանուր արժեքը՝ 19424317 դրամ. համայնքի ներդրումը՝ 11654590 դրամ, պետական ներդրումը՝ 7769727,0 դրամ:

8. «Ախթալա համայնքի Մեծ Այրում բնակավայրի մանկապարտեզի վերանորոգում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 48223697 դրամ. համայնքի ներդրումը՝ 7233554 դրամ, պետական ներդրումը՝ 31345404 դրամ, այլ ներդնող՝ 9644739,0 դրամ:

9. «Ախթալա համայնքի Ախթալա, Ճոճկան, Շամլուղ, Նեղոց բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 48281803,0 դրամ. համայնքի ներդրումը՝ 7242270,0 դրամ, պետական ներդրումը՝ 31383173,0 դրամ, այլ ներդնող՝ 9636360,0 դրամ:

2020 թվականին Ախթալա համայնքում Հայաստանի տնտեսական զարգացման հիմնադրամի «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» ծրագրի շրջանակներում ևս իրականացվել են խոշոր ներդրումներ: «Ախթալա խոշորացված համայնքի կոմունալ սպասարկման ոլորտի տեխնիկական վերազինում, գյուղատնտեսության աջակցություն և տրանսպորտային համակարգի ձևավորում» ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 200 միլիոն դրամ: Վերը նշված ծրագրի երկրորդ բաղադրիչով՝ Ախթալա խոշորացված համայնքն արդեն իսկ ստացել է 101 միլիոն դրամի գույք, այդ թվում՝ 150 աղբաման, հացահատիկային կոմբայն, միկրոավտոբուս և մեկ ինքնաթափ մեքենա, ևս մեկ աղբատար մեքենա կստանա առաջիկայում: Ընթացիկ տարում համայնքը կստանա նաև բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, շարքացան, սրսկիչ, խոտհավաք և խոտհնձիչ:

Ներդրումները կատարվել են ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և համայնքի կողմից իրականացվող՝ Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (ՄՆՏԶ) ծրագրի երկրորդ բաղադրիչի՝ «Միջհամայնքային սոցիալական և տնտեսական զարգացման նախաձեռնությունների աջակցություն» ծրագրի շրջանակներում, որի ընդհանուր ղեկավարումն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից <http://www.atdf.am/>:

2019թ-ին ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում

- Ախթալա համայնքում գազաֆիկացվել են Շամլուղ և Նեղոց բնակավայրերը և Ախթալա բնակավայրում 2 թաղամաս՝ Առափնյա և Երկաթուղայիններ: Նորոգում 70.000, հազ. դրամ պետական բյուջեից:
- Աղբավայրերի բարեկարգում կամ փակում (Աղբի տարանջատման և տեսակավորման համար նախատեսված աղբամանների ձեռքբերում) 1800,0 հազ. դրամ
- Զբոսաշրջային երթուղիների նախագծում և տուրիստական կազմակերպությունների հետ համատեղ գործարկում, Ախթալա համայնքի ամրոցի վերականգնում, ոսկեգործության, արծաթագործության և արհեստագործության արհեստանոցների հիմնում՝ 8250,0 հազ. դրամ
- Դպրոցներում բակերի աղտոտված հողաձածկույթի քիմիական մշակում կամ փոխարինում՝ 24150.0 հազ. դրամ, Համահայկական հիմնադրամ
- Եկեղեցու և ամրոցի հարակից տարածքի աղտոտված հողաձածկույթի փոխարինում՝ 48.300, 0 հազ. դրամ, Համահայկական հիմնադրամ

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի 2019թ. բյուջեի եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալը կազմել է 198641,2 հազ.դրամ:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ախթալա համայնքին 2018թ. տրվելիք սուբվենցիայի գումարների չափը կազմել է 886,6 հազ. դրամ, իսկ 2019թ.՝ 3311,1 հազ. դրամ: Նույն թվականների համար Մեծ Այրում, Ճոճկան, Նեղոց, Շամլուղ բնակավայրերի համար այդ գումարի չափը եղել է 0:

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ախթալա համայնքին բնապահպանական ծրագրերի իրականացման սուբվենցիաներ չի տրամադրվել <https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80/> :

Ազդակիր համայնքներում գործող բիզնեսի և համապատասխան համայնքի միջև կնքված կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (այսինքն՝ գրավոր կամ բանավոր պայմանավորվածություն, որը բխում է ընկերության վարած սոցիալական քաղաքականությունից) շրջանակներում Ընկերությունը համայնքի հետ կնքել է 45000-60000,0 հազ. դրամ գումարի պայմանագիր:

Ըստ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի ՀՀ ԱՃԹՆ 2018թ. հաշվետվության (<https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2018&company=7>)՝ Ախթալա համայնքին Ընկերությունը 2018թ. վճարել է 1934236 դրամ գույքահարկ, 125146 դրամ հողի հարկ, 5974008 դրամ հողամասի վարձակալության վճար Շամլուղի համար (Ըստ ՏԿԵՆ-ի նույն տարվա հաշվետվության՝ 1937228 դրամ գույքահարկ և 302766 դրամ հողի հարկ և 6023770 դրամ հողի վարձակալության դիմաց վճար ([file:///C:/Users/user/Downloads/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2018%20\(31\).pdf](file:///C:/Users/user/Downloads/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2018%20(31).pdf)))

2018թ. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից կոմբինատում կատարված ստուգումների արդյունքում ջրային ռեսուրսներին պատճառված վնասի փոխհատուցման համար 3070914 դրամ վճարել է ՀՀ պետական բյուջե և մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով բացասական ազդեցության համար ՀՀ պետական բյուջե է վճարել 1933060 դրամ գումար:

Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ (Պայմանագիր 12.04.2018թ.)՝ 45000000,0 դրամ, Ախթալայի թիվ 1 դպրոցին՝ 100000 դրամ:

Ըստ նույն հաշվետվության՝ Ընկերությունում աշխատող 492 աշխատակիցներից 381-ը Ախթալա համայնքի բնակիչներ են:

Այդ տարվա համար Ընկերությունը չի վճարել 11562008 դրամ շահութահարկը, վճարել է 4084503 ոչ ռեզիդենտ շահութահարկը և 389134786 դրամ եկամտահարկը, 446647949 դրամ ռոյալթին, 1195732 դրամ բնօգտագործման և 1727699 դրամ բնապահպանական հարկերը:

Ըստ Ընկերության ՀՀ ԱՃԹՆ 2019թ. հաշվետվության (<https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2019&company=7>)՝ Ախթալա համայնքին «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն 2019թ. վճարել է 1853384 դրամ գույքահարկ, 249758 դրամ հողի հարկ, 5974008 դրամ հողամասի վարձակալության վճար Շամլուղի համար:

(1937228 դրամ՝ գույքահարկ, 249758 դրամ հողի հարկ և 6023770 դրամ հողի վարձակալության վճար՝ ըստ ՏԿԵՆ-ի ԱՃԹՆ 2019 հաշվետվության):

Հաշվետու տարում վարձակալած անշարժ գույքի դիմաց Ախթալա համայնքին վճարված գումարը՝ 3600000 դրամ:

Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները կազմել են՝ (Պայմանագիր 12.04.2018թ.)՝ 60000000,0 դրամ, Նեղոցի դպրոցին՝ 200000 դրամ, Շամլուղի դպրոցին՝ 240000,0 դրամ:

Ըստ նույն հաշվետվության՝ Ընկերությունում աշխատող 481 աշխատակիցներից 378-ը Ախթալայի համայնքի բնակիչներ են:

Այդ տարվա համար Ընկերությունը վճարել է 163347327 դրամ շահութահարկ, 1297919 դրամ ոչ ռեզիդենտ շահութահարկ և 407521803 դրամ եկամտահարկ, 461986594 դրամ ռոյալթի, 1103896 դրամ բնօգտագործման և 1757842 դրամ բնապահպանական հարկեր: